ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՑԻՄԵՐՎԱԼԴՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Առաջին իմպերիալիստական պատերազմը մի կատարյալ փորձություն էր միջազգային բանվորական շարժման համար։ Հակառակ Երկրորդ ինտերնացիոնալի Շտուտգարդի, Կոպենհագենի, Բազելի կոնգրեսների որոշումներին, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները քվեարկելով ռազմական վարկերի օգտին, անցան իրենց բուրժուական կառավարությունների կողմը։

Երկրորդ ինտերնացիոնալի մեծամասնության դավաճանությունը բանվոր դասակարգի շահերին «հսկայական աղետ էր, որ ապրել է բանվոր դասակարգը իր ամբողջ պատմության ընթացքում»[1]։

Որպեսզի քողարկեն մարքսիզմի հանդեպ կատարած իրենց դավաճանությունը, երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները սկսված պատերազմը, իրենց երկրների համար, որակեցին որպես ազգային, պաշտպանողական պատերազմ։ Հին ռևիզիոնիստ Ֆոլմարը հայտարարում էր, թե «գերմանական ժողովուրդը հանգիստ չի կարող մնալ, քանի դեռ չախչախված չեն նրա վրա հարձակվող բոլոր թշնամիները»[2]։

Շայդեմանը հանդես գալով գերմանական բոլոր սոցիալ-շովինիստների անունից, հիմնական մեղքը գցում էր ցարական կառավարության վրա։ «Մեր՝ գերմանացիներիս վրա ընկած է պաշտպանվելու պարտականությունը։ Մեր առաջ... կանգնած է Ռուսաստանի նվաճումից պաշտպանվելու խնդիրը։ Մենք՝ սոցիալ-դեմոկրատներս, որ միացել ենք սոցիալիստական ինտերնացիոնալին, չենք դադարում գերմանացիներ լինելուց»[3]։

Երկրորդ ինտերնացիոնալի կրախի հետևանքով միջազգային բանվորական շարժման մեջ առաջ եկավ երեք հիմնական ուղղություն. ծայրահեղ սոցիալ-շովինիզմը, ցենտրիզմը և հեղափոխական ինտերնացիոնալիզմը։

Ինտերնացիոնալիստական հոսանքում ամենահետևողականը բոլշևիկների կուսակցությունն էր՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ 1914 թ. նոյեմբերի 1-ին բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթում լույս տեսավ Լենինի «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» վերտառությամբ մանիֆեստը։ «Ինտերնացիոնալի առաջնորդները,— նշված է մանիֆեստում,— սոցիալիզմի նկատմամբ դավաճանություն կատարեցին, քվեարկելով պատերազմական

---

1 У. Фостер, История трех Интернационалов, М., 1959, стр. 235.
2 Walling N. E., The sosialists and the War. n. y., 1915, p. 240.
3 Նույն տեղում։

վարկերի օգտին, կրկնելով «իրենց» երկրների բուրժուազիայի շովինիստական, «հայրենասիրական» լոզունգները, արդարացնելով և պաշտպանելով պատերազմը, մտնելով պատերազմող երկրների բուրժուական մինիստրությունների մեջ...»[4]։ Մանիֆեստում Վ. Ի. Լենինը առաջ քաշեց իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոզունգը։ Նա կոչ էր անում խզել կապերը օպորտունիզմից և ձեռնամուխ լինել նոր, հեղափոխական ինտերնացիոնալի ստեղծմանը։ Լենինյան լոզունգները այլ կերպ մեկնաբանեցին սոցիալ-շովինիստները։ Նրանք հայտարարում էին, թե Լենինը պառակտման կողմնակից է։ Այդ առթիվ Կրուպսկայան գրում է. «Չի կարելի գործը ներկայացնել այնպես, թե Լենինը մտածում էր միայն այն մասին, թե ինչպես պառակտվել, ընդհակառակը,... նա ավելի շատ մտածում էր ուժերի համախմբման մասին»[5]։

Իմպերիալիստական պատերազմի և սոցիալ-շովինիստների դավաճանական քաղաքականության դեմ մղվող պայքարում ակտիվորեն հանդես եկան նաև Արևմտյան Եվրոպայի, Բալկանների և ԱՄՆ-ի հեղափոխական ինտերնացիոնալիստները։

Իմպերիալիստական պատերազմի դեմ անվեհեր պայքար էին մղում Գերմանիայում հեղափոխական սոցիալ-դեմոկրատներ՝ Կ. Լիբկնեխտը, Կ. Ցետկինը, Ֆ. Մերինգը, Յա. Տիշկան, Վ. Պիկը և ուրիշներ։ Լիբկնեխտը առաջինն էր Գերմանիայում, որ պահանջեց կրախի ենթարկված ինտերնացիոնալի փոխարեն ստեղծել նոր ինտերնացիոնալ։

Բալկաններում ինտերնացիոնալիստական հետևողական գիծ էին անցկացնում բուլղարական «տեսնյակ» սոցիալիստները՝ Դ. Բլագոևի, Վ. Կոլարովի, սերբիական ձախերը՝ Լանցևիչի և Կացլերովիչի գլխավորությամբ։

Հոլանդիայում ձախերը (Պաննեկուկ, Գորտեր, Վայնկոպ, Հոլստ և ուրիշներ) համախմբված էին «Die tribune» թերթի շուրջը։ Նրանք ստեղծեցին հոլանդական անկախ «սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը» բոլշևիկյան դիրքորոշմամբ։ Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում հոլանդական «տրիբունիստները» գրում են. «Մենք մտադիր ենք գործել այնպես, ինչպես դուք... (բոլշևիկները.—Հր. Դ.), և կաշխատենք պրոլետարիատին արթնացնել հեղափոխական ելույթների՝ պատերազմի ու կապիտալիզմի դեմ»[6]։ Շվեդիայի ու Նորվեգիայի ձախերը գլխավորապես երիտասարդներ էին. «Ձախ երիտասարդները»՝ Կ. Խեգլունդի և Ներմանի գլխավորությամբ։

Միջազգային սոցիալիստական կապերի վերականգնման առաջին փորձը կատարեց իտալական սոցիալիստական կուսակցությունը, որը շվեյցարական սոցիալիստների խմբի հետ 1914 թ. սեպտեմբերի 27-ին Լուգանոյի կոնֆերանսում քննարկեց այդ կապերի վերականգնման ուղիների հարցը։ Կոնֆերանսի մասնակիցները ծանոթացան ՌՍԴԲԿ ԿԿ-ի՝ պատերազմի վերաբերյալ բանաձևի թեզիսներին, որոնք իրենց արտահայտությունը գտան նաև կոնֆերանսի որոշման մեջ։ Սակայն ընդունված բանաձևն ուներ ցենտրիստական բնույթ։ Բոլշևիկյան բանաձևի հետ ծանոթացան նաև մյուս երկրների ձախերը։ Վ. Ի. Լենինը Շլյապնիկովին գրած հոկտեմբերի 27-ի և 31-ի նամակներում խնդրում էր բանաձևը թարգմանել ու տարածել Շվեդիայում։ «Թող Կոլոնթայը,— գրում է նա,— օգնի տարածելու այդ մանիֆեստը այլ լեզուներ-

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 20։

5 «Исторический архив», № 2, 1960, стр. 173:

6 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 16, ед. хр. 40699, лл. 1—2.

րով ... Ծանոթացեք շվեդական երիտասարդ սոցիալ-դեմոկրատ, «օպոզիցիայի» առաջնորդ Hoglund-*ի հետ, կարդացեք նրան մեր մանիֆեստը (հենվեցեք ինձ վրա, մենք ծանոթացել ենք Կոպենհագենում)։ Փորձեցեք, հնարավոր չէ՞ արդյոք այստեղ գաղափարական մերձեցում։ (Նա միայն նաիվ, սենտիմենտալ հակաիմպերիալիստ է) ահա հենց այդ մարդկանց պետք է ասել. կամ քաղաքացիական պատերազմի լոզունգներ, կամ մնալ օպորտունիստների ու շովինիստների հետ»*[7]։

Իմպերիալիստական բուրժուազիայի ավելի հեռատես քաղաքագետները ժողովրդական մասսաներին հանգստացնելու նպատակով երբեմն-երբեմն խոսում էին ցանկալի հաշտության մասին։ Այդ գործում նրանց օգնում էին ցենտրիստներն ու սոցիալ-շովինիստները։ Լենինը խիստ զգուշորեն էր մոտենում խաղաղության օգտին ցենտրիստների ու պացիֆիստների այդ ելույթներին։ Նա հասկանում էր, որ իրականում այդ ելույթները տանում են դեպի պատերազմի մինչև հաղթական ավարտը։ Այդ պատճառով էլ Վ. Ի. Լենինը խիստ բացասական վերաբերմունք ցույց տվեց սոցիալ-շովինիստների Լոնդոնի ու Վիեննայի կոնֆերանսներին։

Լոնդոնի կոնֆերանսին (1915 թ. փետրվար) մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի սոցիալիստական կուսակցությունների լիդերները։ Ռուսաստանից հրավիրված էին մենշևիկներն ու էսեռները։ Բայց, Լենինի հանձնարարությամբ, կոնֆերանսին մասնակցեց նաև բոլշևիկների ներկայացուցիչ Տ. Մ. Լիտվինովը (Մաքսիմովիչը)։

Բոլշևիկների լոնդոնյան սեկցիան բողոքեց այն բանի դեմ, որ «կոնֆերանսին հրավիրված են միայն եռյակ համաձայնության երկրների սոցիալիստների ներկայացուցիչները» և նրա «կազմակերպիչները տեղյակ չեն պահել սոցիալիստական բոլոր կուսակցություններին, որոնք ներկայացված են ինտերնացիոնալում...»[8]։ *Լիտվինովին հնարավորություն չարվեց կոնֆերանսում շարադրել բոլշևիկյան բանաձևը պատերազմի մասին։ Թեզիսները հանձնելով կոնֆերանսի նախագահին, նա հեռացավ նիստերի դահլիճից։*

Գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատները լոնդոնյան կոնֆերանսին հակադրեցին 1915 թ. ապրիլին Վիեննայում հրավիրված իրենց կոնֆերանսը, որտեղ ևս պատրաստակամություն հայտնվեց ամեն կերպ օգնել «հայրենիքի պաշտպանությանը»։

Վ. Ի. Լենինը ուշադրությամբ հետևելով սոցիալ-շովինիստների ու ցենտրիստների գործունեությանը, բոլշևիկների առաջ խնդիր դրեց միավորել միջազգային սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական ուժերը, որոնք ակտիվ պայքարի էին ելել իմպերիալիստական պատերազմի դեմ։

ՌՍԴԲԿ ԿԿ-ի արտասահմանյան բյուրոն և բոլշևիկների արտասահմանյան կազմակերպությունների կոմիտեն ամենաակտիվ մասնակցություն ցույց տվին կանանց միջազգային սոցիալիստական կոնֆերանսի նախապատրաստմանը։ Նրանց հանձնարարությամբ Կրուպսկայան, Արմանդը, Կոլոնթայը, Ստալը, Ռավիչը և ուրիշ կին բոլշևիկներ ակտիվ գրագրության մեջ մտան բոլոր երկրների կին ձախ սոցիալիստների հետ[9]։ *Սակայն Անգլիայի, Ավստրիայի, Հո-*

---

7 Ленинский сборник, II, стр. 202.

8 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 351, оп. 12. ед. хр. 29405, л. 1.

9 *Նույն տեղում*, ф. 17, оп. 1, ед. хр. 1815, лл. 1—2.

լանդիայի պատվիրակությունների պահանջով կոնֆերանսին հրավիրվեցին նաև ցենտրիստները[10]։ Չնայած դրան, բոլշևիկները որոշեցին մասնակցել կոնֆերանսին։ Բոլշևիկյան պատվիրակության մեջ մտան Ն. Կրուպսկայան, Ի. Արմանդը, Ե. Ռոզմիրովիչը։ Գերմանիայից կոնֆերանսին մասնակցում էին Կ. Ցետկինը, Տալհայմերը, Կետի Դյունկերը, Առսզետցերը, Ֆրանսիայից՝ Լ. Սոմոնոն, Անգլիայից՝ Ֆիլիպսը, Մոնտեքսորեն, Հոլանդիայից՝ Ռոլանդ Հոլստը, Անկերսմիտը, Շվեյցարիայից՝ Իցունին, Գրաբերը, Լեհաստանից՝ Մարկևսկայան։ Կոնֆերանսում մենշևիկներին ներկայացնում էին Ա. Բալաբանովան և Իզոլսկայան[11]։

Կոնֆերանսը (1915 թ. մարտի 26, Բեռն) հավանություն տվեց Ցետկինի բանաձևին, որտեղ մերկացվում էր «Հայրենիքի պաշտպանության» լոզունգը, բայց մերժեց Կրուպսկայայի և Արմանդի առաջարկը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու և նոր ինտերնացիոնալ ստեղծելու մասին։ Ցետկինը գրավեց հաշտվողական դիրք։ 1915 թ. հուլիսին Կոլոնթային գրած նամակում Լենինը նշում է, որ «ձախերի» գաղափարական դեկլարացիան հսկայական նշանակություն կունենար (իհարկե, ոչ ցետկինյան գռեհկության ոգով, որն անց է կացրել նա Բեռնի կանանց կոնֆերանսում։ Ցետկինը շրջանցել է սոցիալ-շովինիզմը դատապարտելու վերաբերյալ հարցը՝ Զյուդեկումի և Kautsky հետ «հաշտ լինելու ցանկությունից»)[12]։

Բոլշևիկյան պատվիրակությունը կոնֆերանսին ներկայացրեց բանաձևի իր նախագիծը։ Այնտեղ նշվում էր, որ եթե աշխատավոր կանայք ակտիվորեն մասնակցեն օպորտունիզմի դեմ մղվող պայքարին, ինչպես նաև հեղափոխական շարժումներին, ապա պրոլետարիատի պայքարը կպսակվի հաղթանակով։ «Առաջավոր երկրների պրոլետարիատը,— նշված է բանաձևում,— կհասնի սոցիալիզմին, իսկ հետամնաց երկրների պրոլետարիատը ձեռք կբերի դեմոկրատական հանրապետություն»[13]։ Սակայն բոլշևիկյան բանաձևը մերժվեց։ Կոնֆերանսը պացիֆիստական-ցենտրիստական դիրքերից հեռու չգնաց։

Նույն նշանաբանով անցավ նաև երիտասարդական միջազգային կոնֆերանսը, որը նույնպես տեղի ունեցավ Բեռնում (1915 թ. ապրիլ)։

Երիտասարդական և կանանց միջազգային կոնֆերանսները թեև նպաստեցին ինտերնացիոնալիստական ուժերի համախմբման գործին, բայց լավագույն դեպքում «սահմանափակվեցին հին բանաձևերի կրկնությամբ, ցույց չտալով բանվորներին, որ սոցիալիզմի գործն անհնարելի է առանց սոցիալ-շովինիստների դեմ ուղղված պայքարի։ Դրանք լավագույն դեպքում եղել են տեղում արված քայլ»[14]։

Բողոքը պատերազմի դեմ գնալով մեծ չափեր էր ընդունում։ Հեղափոխական բուռն շարժումներ էին տեղի ունենում պատերազմող բոլոր երկրներում։ «Արդեն այն փաստը,— նշված է գերմանական ռազմական մինիստրության հաշվետվության մեջ,— որ դեպքերը այսպիսի ընթացք են ընդունել, նշանա-

---

10 Նույն տեղում, ф. 456, оп. 1, ед. хр. 27499, л. 1.

11 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 343, оп. 1, ед. хр. 27109, лл. 1, 57, 58.

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 199։

13 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 343, оп. 1, ед. хр. 27109, лл. 73—75.

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 413։

կում է, որ պատերազմը և նրա առաջացրած թանկությունը հուզում և վրդովեցնում է մասսաներին»[15]։

Ցենտրիստները հասկանում էին, որ շարունակվող պատերազմի պայմաններում անհրաժեշտ է կիրառել մասսաներին «հանգստացնելու» նոր մեթոդներ։ Նրանք համառորեն ձգտում էին վերականգնել ՄՍԲ-ի (միջազգային սոցիալիստական բյուրո) գործունեությունը։ Այդ ուղղությամբ ակտիվորեն գործում էին իտալական և շվեյցարական կուսակցությունների ցենտրիստական տարրերը։ Սակայն տեսնելով, որ ՄՍԲ-ի օգնությամբ հնարավոր չէ հրավիրել ինտերնացիոնալիստական կոնֆերանս, իտալական սոցիալիստական կուսակցության Կենտկոմը 1915 թ. մայիսի 15-ին որոշեց ստանձնել կոնֆերանսի հրավիրման նախաձեռնությունը։ Գործի անցան նաև շվեյցարական ցենտրիստները։ Կոնֆերանսի կազմակերպիչները ցենտրիստական կոնֆերանս հրավիրելու կուրս վերցրին։ «Բերներ թագվախտ» թերթի (Շվեյցարիա) խմբագիր Ռոբերտ Գրիմը տարածեց շրջաբերական նամակներ։ Նա հրավեր ուղարկեց միայն այն կուսակցություններին, որոնք ՄՍԲ-ի անդամ էին։ Այդ պատճառով նախնական խորհրդակցությանը չկարողացան մասնակցել հոլանդական տրիբունիստները, գերմանական ձախերը, լեհական ձախ օպոզիցիան, շվեդական «երիտասարդները»։ Գրիմը փորձեց չհրավիրել նաև բոլշևիկներին, բայց Լենինը ժամանակին մերկացրեց այդ քայլը[16]։

1915 թ. հուլիսի 11-ին Բեռնում տեղի ունեցավ նախնական խորհրդակցություն, որին մասնակցեցին միայն չորս երկրների ներկայացուցիչներ՝ Ա. Բալաբանովան, Օ. Մորգարին (իտալական սոցիալիստական կուսակցություն), Պ. Աքսելրոդը (մենշևիկյան կազմկոմիտե), Ա. Վարսկին (լեհական սոցիալիստական կուսակցության գլխավոր վարչություն), Գ. Վալեցկին (լեհական սոցիալիստների կուսակցության ձախ խումբ), Գ. Զինովևը (բոլշևիկյան Կենտկոմ) և Ռ. Գրիմը[17]։ Խորհրդակցությունում մեծամասնություն կազմեցին ցենտրիստները։ Մորգարիի ու Գրիմի հաղորդումներից երևում էր, որ նրանք ցանկանում էին ձախերի հետ միասին կոնֆերանս հրավիրել նաև ցենտրիստներին, գերմանական սոցիալ-պացիֆիստներին՝ Կաուցկուն, Հաազեին, Բեռնշտայնին։ Նույնիսկ խոսք եղավ բացահայտ սոցիալ-դավաճաններ Բրանտինգին, Տրուլսարային և ուրիշների հրավիրելու մասին։

Այդ առաջարկների դեմ խորհրդակցությունում հանդես եկավ բոլշևիկյան Կենտկոմի պատվիրակը։ Նա առաջարկեց կոնֆերանս հրավիրել միայն այն կուսակցություններին, խմբերին, կազմակերպություններին, որոնք պատրաստ են ամենավճռական ձևով պայքարել «քաղաքական հաշտություն» ցենտրիստական գծի ու շովինիզմի դեմ։ Այնուհետև բոլշևիկների ներկայացուցիչը առաջարկեց մինչև կոնֆերանսը հրավիրել երկրորդ նախնական խորհրդակցություն, որին կմասնակցեն հոլանդական, բուլղարական, սկանդինավյան, գերմանական, լեհական ու լատիշական ձախերը։ Երկար բանավեճից հետո որոշվեց կոնֆերանս հրավիրել բոլոր այն կազմակերպություններին ու խմբերին, որոնք պայքարում են պատերազմի դեմ։

Խորհրդակցության ժամանակ արդեն բոլշևիկները սկսեցին բանակցություններ վարել ձախերի հետ։ Լենինը Ռադեկին գրած նամակում պահանջում

---

15 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 191, ед. хр. 625, л. 17.

16 Տե՛ս Ленинский сборник, XIV, стр. 161.

17 Տե՛ս նույն տեղում, էջ 162—163։

էր այդ բանակցությունները գաղտնի պահել Գրիմից, Բալաբանովայից, Տրոցկուց։ Նա ընդգծում էր, որ եթե ձախերը համախմբվեն, ապա կփրկվի ինտերնացիոնալի դրոշը, «Հոլանդացիներ+մենք+գերմանական ձախեր=0 և այդ դժբախտություն չէ, այլ այն հետո կլինի ոչ թե զերո, այլ ամբողջ»[18]։

Սակայն խորհրդակցությունը գտավ, որ հրավիրվող կոնֆերանսը չպետք է ծառայի նոր ինտերնացիոնալ ստեղծելու նպատակին։ Նրա նպատակը պետք է լինի խաղաղության օգտին պրոլետարիատին ելույթների կոչ անելը[19]։ Սա մի անգամ ևս ցույց էր տալիս, որ ցենտրիստները դեռևս իրենց կապերը չէին խզել սոցիալ-շովինիզմից։ Հաշվի առնելով այս հանգամանքը, Լենինը գրում էր. «Հնարավոր է թերևս, որ կոնֆերանսը կլինի «կապ» Կաուցկու և Ռենոդելի միջև՝ նրանց «հաշտության» համար։ Այն ժամանակ սկանդալ կանենք և կհեռանանք՝ տալով հրաժարական»[20]։

Ինեսա Արմանդին ուղարկած նամակում նա գրում էր. «Ինձ շատ է վրդովում և հուզում Եվրոպայի սոցիալիստների դիրքը ներկա պատերազմում։ Ես համոզված եմ, որ բոլորը, առաջին հերթին և առավելապես գերմանական սոցիալիստները, դարձել են «շովինիստներ»։ Միանգամայն անհանդուրժելի է գերմանական ու ֆրանսիական... սոցիալիստական թերթեր կարդալը։ Ծայրահեղ «շովինիզմ»։ Այնուհետև. «Ինձ ասել են, որ Մարտինովը (լիկվիդատոր) Ցյուրիխում հրավիրել է խորհրդակցություն (ես կարծում եմ մասնավոր) և հենց սկզբից հարձակում է գործել գերմանական սոցիալիստների դեմ, բայց հետագայում (բանավեճի 2-րդ օրը) փոխել է կարծիքը (Աքսելրոդի քայքայիչ ազդեցության ներքո) և մերժել է այն բոլորը, ինչի մասին խոսել էր առաջ... Ամո՛թ...»[21]։

Վ. Ի. Լենինը ձախերի միասնության անհրաժեշտության հարցն առաջ քաշեց նաև Դ. Վայնկոպին գրած նամակում. «Կարևոր է, որպեսզի մենք ճըշտեինք պատերազմի իմպերիալիստական բնույթը, պաշտպանեինք մարքսիզմը Կաուցկու, Պլեխանովի և Ընկ. կեղծումից»[22]։ Վայնկոպը պատասխան նամակում հայտնում է բոլշևիկների հետ ընդհանուր ծրագիր մշակելու վերաբերյալ տրիբունիստների ցանկության մասին[23]։

Դեռ մինչև կոնֆերանսի բացումը Լենինը մշակեց ձախերի ընդհանուր դեկլարացիայի նախագիծը։ Ռադեկին, Վայնկոպին, սկանդինավյան ձախերին գրած նամակներում նա պահանջում է մշակել հականախագծեր, կամ ուղղումներ մտցնել իր նախագծում։ Միաժամանակ Լենինը ձգտում էր, որ կոնֆերանսում ձախերը մեծ թիվ կազմեն։ Կոլոնթային նա գրում է. «Դուք պետք է լարեք բոլոր ուժերը, որպեսզի այստեղ ուղարկեք Խեգլյունդին կամ ամենաձախ ու ամենակայուն նորվեգացուն...»[24] և պահանջում է, որ սկանդինավյան պատվիրակները Ցիմերվալդ գան կոնֆերանսից 2—3 օր շուտ։ «Ես հույս

---

18 Ленинский сборник, XIV, стр. 165.

19 Տե՛ս Циммервальдская и Кинтальская конференции (оф. документы), Л.—М., 1924, стр. 16.

20 «Новая и новейшая история», № 2, 1960, стр. 4 (Новые документы В. И. Ленина).

21 «Вопросы истории КПСС», № 4, 1960, стр. 3—4 (Новые документы В. И. Ленина).

22 Տե՛ս նույն տեղում, էջ 6։

23 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 16, ед. хр. 40699, л. 1.

24 Ленинский сборник, II, стр. 238.

ունեմ գալ երկու օր շուտ,— գրում է նա Ռադեկին,— եթե գուք ինձ հայտնեք, որ գերմանացիները նույնպես շուտ կգան...»[25]։

Կոնֆերանսից մեկ օր առաջ տեղի ունեցավ ձախերի խորհրդակցություն, որտեղ, սակայն գերմանական պատվիրակները դեմ դուրս եկան բոլշևիկյան հարցադրումներին։ Լենինի քննադատությունից հետո Ռադեկը մշակել էր իր նախագիծը, որը և ներկայացվեց կոնֆերանսին ձախերի անունից[26]։ Կոնֆերանսը տեղի ունեցավ 1915 թ. սեպտեմբերի 5—7-ը Շվեյցարիայի Ցիմերվալդ գյուղում։

Կոնֆերանսին մասնակցում էին Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Ռուսաստանի, Հոլանդիայի, Լեհաստանի, Նորվեգիայի և բալկանյան ֆեդերացիայի ներկայացուցիչները՝ ընդամենը 38 պատվիրակ։

Պատվիրակների մեծամասնությունը կազմում էին ցենտրիստները՝ Գ. Լեդեբուրի գլխավորությամբ։ Այսպես կոչված Ցիմերվալդյան կենտրոնի մեջ մտնում էին 5—6 պատվիրակ, որոնց ղեկավարում էին Գրիմը և Տրոցկին։ Այդ խումբը, տատանվելով ձախերի և աջերի միջև, հիմնականում աջակցում էր աջ թևին։

Ցենտրիստների և կիսացենտրիստների դեմ կոնֆերանսում հանդես եկավ ինտերնացիոնալիստների ցիմերվալդյան ձախ խումբը՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։

Կոնֆերանսի բացման ժամանակ Գրիմը շտապեց հայտարարել, որ նա «անպատակ չունի ստեղծելու նոր ինտերնացիոնալ»[27]։ Սակայն հենց այդ հարցը իրականում դարձավ ցիմերվալդյան շարժման ձախ և աջ թևերի հետագա վիճաբանությունների առարկան։

Կոնֆերանսի սկզբում գերմանական և ֆրանսիական պատվիրակները ներկայացրին միասնական դեկլարացիա, որտեղ նշվում էր, որ իմպերիալիստական «պատերազմը... մեր պատերազմը չէ» և կոչ էր արվում բոլոր երկրների պրոլետարներին պայքարել պատերազմի դեմ հանուն խաղաղության և արդարացի հաշտության[28]։ Այդ հայտարարությունը, թեև չէր առաջադրում պատերազմի դեմ պայքարի կոնկրետ միջոցներ, արժանացավ պատվիրակների մեծ հավանությանը և դարձավ միջազգային սոցիալիստական կապերի վերականգնման առաջին քայլերից մեկը։

Լուրջ վիճաբանություններ ծավալվեցին կոնֆերանսին ներկայացված մանիֆեստի երեք նախագծերի շուրջը։ Հատուկ հանձնաժողովը դրանք մշակելուց հետո մեկ միասնական տեսքով ներկայացրեց կոնֆերանսին։ Մանիֆեստում, որ ընդունվեց միաձայն, տեղ գտան հեղափոխական մարքսիզմի մի շարք դրույթներ՝ Լենինի և նրա համախոհների պահանջով։ Սակայն Լենինը միաժամանակ նշում էր, որ մանիֆեստը «տառապում է անհետևողականությամբ և թերասածությամբ»[29]։ Այսպես, մերկացնելով բուրժուազիայի սուտը, թե պատերազմը ծառայում է «հայրենիքի պաշտպանությանը», մանիֆեստը ոչինչ չէր ասում 2-րդ ինտերնացիոնալի լիդերների նույնատիպ կեղծիքի մա-

---

25 Նույն տեղում, էջ 177։

26 Տե՛ս «Социал-демократ», 11. x. 1915.

27 Левые во втором Интернационале (Первая Циммервальдская конференция по заграничным материалам), изд. Кронштадского комитета РСДРП, 1917, стр. 20.

28 Տե՛ս «Социал-демократ», 11. x. 1915.

29 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 487։

սին, չէր բացահայտում նրա դավաճանության պատճառները, չէին տրվում սոցիալ-շովինիզմի բնութագիրը և նրա դեմ պայքարելու ձևերն ու մեթոդները։ Նշելով, որ պատերազմի սարսափներից փրկվելու ուղին սոցիալիզմի համար մղվող հեղափոխական պայքարն է, մանիֆեստը պատերազմի դեմ վճռական պայքարի կոչ չէր անում[30]։

Ստորագրելով մանիֆեստի տակ, Լենինը և մյուս ձախերը հայտարարեցին մանիֆեստի մի շարք դրույթների հետ իրենց համաձայն չլինելու մասին։ Ձախերի հայտարարության մեջ ասվում էր. «Կոնֆերանսի ընդունած մանիֆեստը, մեզ լիովին չի բավարարում... Մենք մեր ձայնը տալիս ենք մանիֆեստի օգտին այն պատճառով, որ այն դիտում ենք որպես պայքարի կոչ, իսկ այդ պայքարում մենք ցանկանում ենք ընթանալ ինտերնացիոնալի մնացած մասերի հետ ձեռք-ձեռքի տված»[31]։

1915 թ. օրհասական էր հայ, լեհ և այլ ժողովուրդների համար։ Սկսվել և բարբարոսաբար շարունակվում էր հայ ժողովրդի զանգվածային բնաջնջումը։ Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը չէր կարող անտարբեր անցնել մի ամբողջ ժողովրդի ճակատագրի կողքով և իր ցավակցությունը հայտնեց «պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհական ու բելգիական ժողովուրդներին, հրեական ու հայ հալածվող ազգերին. բոլոր այն միլիոնավոր մարդկանց, որոնք տառապում են անսահման աղքատության ու ճնշման մեջ...»[32]։

Կոնֆերանսում ձախերի մեծագույն նվաճումներից հանդիսացավ ինտերնացիոնալ սոցիալիստական հանձնաժողովի (ԻՍՀ) ստեղծումը, որի կազմում ընտրվեցին Մորգարին, Շարլ Նենը, Ռ. Գրիմը (նախագահ) և Ա. Բալաբանովան (քարտուղար)։ Սակայն որոշվեց, որ դա ժամանակավոր օրգան է և չպետք է հակադրվի երկրորդ ինտերնացիոնալի միջազգային սոցիալիստական բյուրոյին։

Կոնֆերանսի ամենախոշոր նվաճումը ցիմերվալդյան ձախ խմբի մեջ հեղափոխական մարքսիստներին համախմբելն էր։ Նրա մեջ բացի ռուսական ու լատիշական բոլշևիկներից, մտան նաև Լեհաստանի, Բուլղարիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի ու Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները։ Շատ ձախ սոցիալ-դեմոկրատներ, որոնք հանդես էին գալիս իմպերիալիստական պատերազմի դեմ, կամ ձերբակալված էին (Կ. Ցետկին, Ռ. Լյուքսեմբուրգ), կամ ուղարկվել էին ռազմաճակատ (Կ. Լիբկնեխտ) և չկարողացան մասնակցել կոնֆերանսին։

Վ. Ի. Լենինը ամենաակտիվ կերպով պրոպագանդում էր ցիմերվալդյան ձախ թևի հայացքները։ 1915 թ. հոկտեմբերին նա զեկուցումներով հանդես եկավ Լոզանում, Ժնևում և Ցյուրիխում։

1915 թ. դեկտեմբերի վերջին ցիմերվալդյան ձախերի մոտ միտք հղացավ ունենալ իրենց տեսական օրգան՝ «Vorbota» ամսագիրը։ Նրա հրատարակիչներն էին Գ. Ռոլանդ-Հոլստը և Ա. Պանեկուկը։ Ամսագիրը իր առաջ նպատակ դրեց օգնելու ցիմերվալդյան ձախին՝ տեսական պայքար մղելու սոցիալ-շովինիզմի և ցենտրիզմի դեմ։

---

30 Տե՛ս նույն տեղում, էջ 487—490։

31 «Социал-демократ», 13. x. 1915.

32 Циммервальдская и Кинтальская конференции (оф. документы), Л.—М., 1924, стр. 25.

Զիմերվալդյան շարժումը արագորեն տարածվում էր բոլոր երկրներում։ Արդեն 1915 թ. դեկտեմբերին Եվրոպայի ու ԱՄՆ-ի 28 սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից 13 կուսակցություն և 8 օպոզիցիոն խումբ որոշեցին միանալ ցիմերվալդյան միավորմանը։ Ֆրանսիական սոցիալիստական, գերմանական ու դանիական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները արտահայտվեցին այդ միավորման դեմ[33]։ Սակայն այդ երկրներում ևս ցիմերվալդյան շարժումը օրեցօր նոր կողմնակիցներ էր ձեռք բերում։ Փարիզի ինտերնացիոնալ ակումբը հավանություն տվեց ցիմերվալդյան որոշումներին, գտնելով, որ այդ կոնֆերանսով կատարվեց «առաջին քայլը պրոլետարիատի դասակարգային պայքարի վերածնման, 3-րդ ինտերնացիոնալի ստեղծման ճանապարհին[34]։

Զիմերվալդյան կոնֆերանսից հետո միջազգային սոցիալիստական բյուրոյի լիդերները մի շարք քայլեր ձեռնարկեցին ցիմերվալդի աճող ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ, պատճառաբանելով, որ իբր այն «վտանգ է սպառնում կուսակցության միասնությանը»։

Գյուիսմանսը և մյուս սոցիալ-շովինիստները օգտվում էին այն հանգամանքից, որ Գրիմի ղեկավարած ԻՍՀ-ն անհետևողական էր։ Դեռևս 1915 թ. նոյեմբերի 27-ին Գրիմը հայտարարել էր, որ ԻՍՀ-ն ժամանակավոր կազմակերպություն է և լուծարքի կենթարկվի այն ժամանակ, երբ ՄՍԲ-ն առաջ կքաշի պատերազմի դեմ պայքար մղելու լոզունգը[35]։ Սակայն 1916 թ. փետրվարի 5—9-ը Բեռնում տեղի ունեցած ԻՍՀ-ի նիստում, որին մասնակցում էր նաև Վ. Ի. Լենինը, Գրիմը ստիպված եղ վերցրեց իր հայտարարությունը։ Խորհրդակցությունը որոշեց ցիմերվալդյան II կոնֆերանսը հրավիրել Շվեյցարիայի Կինտալ գյուղում։ Միաժամանակ հանձնաժողովի աջ թևը հասավ այն բանին, որ որոշվեց անհատապես կոնֆերանս հրավիրել Կաուցկուն, Հաազեին և Բեռնշտայնին։

Երկրորդ սոցիալիստական կոնֆերանսի նախապատրաստմանը մասնակցում էր նաև բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը։

Բոլշևիկները ԻՍՀ-ին ուղարկեցին «ՌՍԴԲԿ-ի ԿԿ-ի առաջարկությունը 2-րդ սոցիալիստական կոնֆերանսին»։ Առաջարկության մեջ նշվում էր, որ «պատերազմի վերաբերմամբ արդեն երևան է եկել բանվոր դասակարգի երկու միանգամայն անհաշտ քաղաքականություն»[36]։ Լենինը ցույց էր տալիս, որ այդ պառակտումն «առաջ կբերի բանվորական մասսաների մեջ շփոթություն, նրանց գիտակցության մթագնում, կդժվարացնի մասսայական հեղափոխական այն պայքարը, որին բոլոր ցիմերվալդականները պաշտոնապես համակրում են...»[37]։ Լենինը սոցիալիստների խնդիրն էր համարում մասսաներին բացատրել, որ պառակտումն անխուսափելի է նրանց հետ, ովքեր սոցիալիզմի դրոշի ներքո բուրժուազիայի քաղաքականություն են վարում։

Զիմերվալդյան երկրորդ կոնֆերանսը տեղի ունեցավ 1916 թ. ապրիլին՝ սկզբում Բեռնում, իսկ հետո Կինտալում։ Մասնակցում էին 43 պատվիրակ,

---

33 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 351, оп. 10, ед. хр. 27125, л. 1об.

34 Նույն տեղում, ед. хр. 29454, л. 1.

35 «Пролетарская революция», № 9 (44), 1925, стр. 94.

36 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 30։

37 Նույն տեղում, էջ 230։

Նրանց թվում Գերմանիայի, Իտալիայի, Շվեյցարիայի Ռուսաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի և Երիտասարդական միջազգային միության ներկայացուցիչները։ Վիզաներ չստանալու պատճառով կոնֆերանսին չկարողացան մասնակցել Անգլիայի, Բուլղարիայի, Ռումինայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Շվեդիայի պատվիրակները։ Կինտալի կոնֆերանսում ձախերին ղեկավարում էին Վ. Ի. Լենինը և Ռոզա Լյուքսենբուրգը։ Ցիմերվալդյան ձախի մեջ մտան Բրեմենի ձախ ռադիկալների (Պ. Ֆրյոլիխ), Ֆրանսիական ինտերնացիոնալիստների հեղափոխական թևի (Ա. Գիլբո), Սերբիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (Տ. Կացլերովիչ), երիտասարդական ինտերնացիոնալի (Վ. Մյունցենբուրգ), Շվեյցարիայի (Պլատեն, Ռոմբան, Նոբս), գերմանական սպարտակյանների, Լեհական սոցիալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր վարչության (Լապինսկի) ներկայացուցիչները և իտալացի Սերատին՝ թվով 12 ձայն։ Որոշ հարցերում ցիմերվալդյան ձախ թևը ձեռք էր բերում 19 ձայն։ Կոնֆերանսում ցենտրիստները սահմանափակվեցին 2-րդ ինտերնացիոնալի դատարկ քննադատությամբ, սակայն հանդես եկան նրա հետ կապերը խզելու դեմ։ Նրանք գտնում էին, որ դավաճանության մեջ մեղավոր են ոչ միայն առաջնորդները, այլ նաև մասսաները, որոնք կուրորեն հետևում էին շովինիզմով տոգորված առաջնորդներին։ Գերմանական և ֆրանսիական ցենտրիստները առաջարկում էին մասնակցել միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստերին և ներսից «քննադատել այն»։

Ձախերը չհամաձայնվելով ցենտրիստական հարցադրմանը, հայտարարեցին, որ միջազգային սոցիալիստական բյուրոն անհրաժեշտ է ինտերնացիոնալի նախկին առաջնորդներին՝ պատերազմից հետո ինտերնացիոնալը «վերականգնելու» համար։ «Այդպիսի պայմաններում,— ընդգծում էին ձախերը,— աջակցել ՄՍԲ-ին, նպաստել նրա նիստերի հրավիրմանը, նշանակում է օգնել սոցիալ-հայրենասերներին խաբելու բանվորներին»[38]։

Հարցի վերջնական լուծման համար ստեղծվեց հանձնաժողով (Հոֆման, Նեն, Լացարի, Լենին, Աքսելրոդ և ևս 2 հոգի)։ Ձայների մեծամասնությամբ անցավ ցենտրիստների առաջարկը։ Սակայն պայքարն այնքան ուժեղացավ, որ վերջիվերջո ընդունվեց կոմպրոմիսային որոշում։ ՄՍԲ-ի նիստ հրավիրելու դեպքում պետք է հրավիրվեր նաև ԻՍՀ-ի նիստ, որտեղ կմշակվեր ՄՍԲ-ի հանդեպ ունենալիք վերաբերմունք[39]։

Կոնֆերանսը մերժեց բոլշևիկների լոզունգը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, թեև իր որոշման մեջ ընդգծեց, որ «կայուն խաղաղության համար մղվող պայքարը կարող է ավարտվել միայն սոցիալիզմի իրագործման համար մղվող պայքարում»[40]։

Կինտալի կոնֆերանսը ընդունեց մանիֆեստ։ Դիմելով պատերազմող երկրների պրոլետարիատին, նա նրանց վճռական մարտի էր կոչում ընդդեմ պատերազմի[41]։

---

38 «Социал-демократ», 10, VI, 1916.

39 Տե՛ս Циммервальдская и Кинтальская конференции (оф. документы), Л.—М., 1924, стр. 54.

40 Նույն տեղում, էջ 47։

41 Տե՛ս նույն տեղում, էջ 48։

Ինչպես ցիմերվալդյան առաջին, այնպես էլ երկրորդ կոնֆերանսը անտարբեր չանցավ հայ և մյուս ժողովուրդների ճակատագրի կողքով, իր բողոքը հայտնեց իմպերիալիստական պետությունների քաղաքականության դեմ։ Կինտալի կոնֆերանսի մանիֆեստում նշվում է. «Ինչպես ցույց է տալիս բալկանյան պետությունների փորձը և, առանձնապես, Սերբիայի և Հայաստանի ճակատագիրը, փոքր պետությունները և ճնշված ազգերը հանդիսանում են միայն շախմատային ֆիգուրաներ մեծ տերությունների իմպերիալիստական խաղի մեջ»[42]։

Այնուհետև բանաձևում ընդգծվում է, որ այդ ժողովուրդները պատերազմի ժամանակ խաղում են հասարակ զենքի դեր, իսկ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները շարունակում են իրենց «հայրենիքի պաշտպանության» քաղաքականությունը, ոչնչով չնպաստելով ճնշված ժողովուրդների վիճակի բարելավմանը։

Ընդհանուր առմամբ Կինտալի կոնֆերանսը նոր քայլ էր միջազգային սոցիալիստական շարժման ճանապարհին։ Նա ցույց տվեց, որ ցիմերվալդյան ձախերը Լենինի գլխավորությամբ դարձել են ազդեցիկ ուժ։ Ակնհայտ էր, որ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում արդեն առաջացել և գործում են այնպիսի խմբեր, որոնք վճռականորեն հանդես են գալիս սոցիալ-շովինիստների և ցենտրիստների դեմ։

Լենինը ցույց էր տալիս, որ տիրապետող դասակարգերի կողմից վարվող պատերազմը վտանգավոր էր դարձել հենց իրենց համար։ Այդ պատճառով էլ նրանք փնտրում էին իմպերիալիստական հաշտություն կնքելու ուղիներ։ Նրանց օգնում էին սոցիալ-շովինիստները, ինչպես և ցիմերվալդյան մեծամասնությունը՝ Կաուցկու գլխավորությամբ։ Վ. Ի. Լենինը Կինտալի կոնֆերանսից հետո եկավ այն համոզման, որ ցիմերվալդյան շարժումը արդեն իրեն սպառել է։ Այդ իսկ պատճառով նա հարց դրեց դուրս գալ այդ միավորումից, խզել կապերը ցենտրիստ կաուցկիականների հետ և ստեղծել հեղափոխական, մարքսիստական ինտերնացիոնալ։ Վ. Ի. Լենինը հաշվի էր առնում այն հանգամանքը, որ ձախերը բավականին ուժեղացել էին և ի վիճակի էին իրենց հետևից տանելու մասսաներին։

Սոցիալ շովինիզմի կողմը առաջինը թեքվեց ԻՍՀ-ի նախագահ Ռ. Գրիմը։ Լենինը գրում է. «Նա ուզում է համարվել ձախերի առաջնորդ, ԻՍՀ-ի նախագահ, ցիմերվալդականների ներկայացուցիչ և ղեկավար, նա բանվորներին խաբում է ամեն տեսակ «հ. հ. հեղափոխական» ֆրազներով, գործնականում դրանցով քողարկելով կուսակցության հին, սոցիալ-հայրենասիրական, բուրժուական-ռեֆորմիստական պրակտիկան»[43]։ Հետագայում Գրիմի օրինակին հետևեցին մյուս ցենտրիստները, ցիմերվալդյան մեծամասնությունը։ Ցիմերվալդը ակնհայտ կրախ էր ապրում։ Այդ կրախը ավելի արագացավ Ռուսաստանում փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, որը հաստատեց բոլշևիկյան կուսակցության լենինյան տակտիկայի կենսունակությունը։ Նոր էտապ էր սկսվում հեղափոխական ինտերնացիոնալիստների համախմբման և կոմինտերնի ստեղծման ճանապարհին։

---

42 Նույն տեղում, էջ 53—54։

43 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 298։

В. И. ЛЕНИН—ОРГАНИЗАТОР ЦИММЕРВАЛЬДСКОГО ДВИЖЕНИЯ

Г. Х. ДАРБИНЯН

Резюме

Первая мировая война, вспыхнувшая в 1914 г., ускорила крах Второго Интернационала. Социал-демократические партии перешли на сторону своих буржуазных правительств, голосовали за военные кредиты, в течение всей войны осуществляя лозунг «О защите отечества». Только партия большевиков во главе с В. И. Лениным и отдельные оппозиционные левые группы в разных странах выступали против империалистической войны, выдвигая требование о создании нового, революционного Интернационала.

В деле образования Коминтерна большую роль сыграло циммервальдское движение и возникшая в нем левая группа, организатором которой был В. И. Ленин.

В статье показана та большая работа, которую вели большевики во главе с В. И. Лениным за сплочение сил интернационалистов.

Но вскоре выяснилось что находящиеся в циммервальдском объединении центристы, каутскианцы не намерены продолжать борьбу против войны и империализма. Поэтому В. И. Ленин уже в конце 1916 года поставил вопрос о выходе из этого объединения и о создании революционного Интернационала только из левых, который продолжал бы лучше традиции первого Интернационала, основанного Марксом и Энгельсом.